ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/14 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան 26.03.2025թ.

2025 թ-ի մարտի 26-ին «Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գրասենյակում, որը գտնվում է ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա հասցեում, տեղի ունեցավ ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/14 ծածկագրով («Շենքերի ոլորտում չափողականություն, հաշվետվայնություն և հավաստագրում (ՉՀՀ) համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում» բաղադրիչի շրջանակներում սոցիոլոգիական վերլուծության ծառայությունների ձեռքբերում) գնման ընթացակարգի երկրորդ փուլի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ռ.Շահազիզյան	-հանձնաժողովի նախագահ	Ծրագրերի իրականացման և մոնիտորինգի բաժնի պետ
Ա.Աջամօղլյան	-հանձնաժողովի անդամ	Ծրագրերի իրականացման և մոնիտորինգի բաժնի գլխավոր մասնագետ, Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» դրամաշնորհային ծրագրի «Շենքերի ոլորտում չափողականություն, հաշվետվայնություն և հավաստագրում (ՉՀՀ) համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում» բաղադրիչի համակարգող
Դ.Նիկողոսյան	-հանձնաժողովի անդամ	Գործերի կառավարման և գնումների բաժնի պետ/գործերի կառավարչի պարտականությունները կատարող
Գ.Արաբյան	-հանձնաժողովի անդամ	էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգի շահագործման օպերատոր

Բացակա էր՝

Գ.Ասրյան	-հանձնաժողովի անդամ	Ծրագրի հաղորդակցության և տեղեկատվության տարածման փորձագետ

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է 5 անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի 4 անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ռ.Շահազիզյանը, իսկ քարտուղարն էր՝ Ա.Հակոբյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/14 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտի գնահատման և առաջարկված գնի մասին
2. Ընտրված մասնակից որոշելու մասին
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/14 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ռ.Շահազիզյանը նիստը հայտարարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկայի բնութագիրը և անհրաժեշտ չափորոշիչները:

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/14 ծածկագրով երկրորդ փուլի հայտերը բացվել են հրավերի սահմանված օրը և ժամին՝ 2025 թվականի մարտի 26-ին ժամը 12:00: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել: Պարզաբանումներ չեն կատարվել:

Հանձնաժողովի նախագահ Ռ.Շահազիզյանը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկայի գինը:

Հ/Հ	Գնման առաջկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1	Սոցիոլոգիական վերլուծության ծառայություններ	9292080

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/14 ծածկագրով ընթացակարգի երկրորդ փուլին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/ինք/ այսուհետ՝ նաև մասնակիցը/ները//.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցեներ	Հեռախոսահամար
1	Դիիմ Քոմյունիքեյշնզ ՍՊԸ	deem@deemcommunications.com	011547211

Հանձնաժողովը արձանագրեց, որ

Մասնակից/ներ/ը հայտ/եր/ը կազմել և ներկայացրել են ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/14 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան:

- Մասնակիցների կողմից ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Չափա-բաժնի համար	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները		
	Հրաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1		Դիիմ Քոմյունիքեյշնզ ՍՊԸ	21500000	4300000	25800000

- Մասնակցի կողմից ներկայացրած տեխնիկական առաջարկը համապատասխանում է հրավերով նախատեսված պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 96-րդ կետը և հրավերի 8.16 կետը, մասնակիցների հայտերը գնահատվում են հետևյալ կարգով՝

1) Լավագույն տեխնիկական առաջարկ ներկայացրած մասնակցի /մասնակիցների/ առաջարկը գնահատվում է առավելագույնը «100» միավորով: Լավագույն գնահատված տեխնիկական առաջարկի համեմատությամբ գնահատվում են մնացած բոլոր տեխնիկական առաջարկները:

Մասնակցի տեխնիկական առաջարկների գնահատականն է

Մասնակցի անվանումը	Տեխնիկական առաջարկի միավոր
Դիիմ Քոմյունիքեյշնզ ՍՊԸ	100

2) նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի ֆինանսական առաջարկը գնահատվում է հարյուր միավոր, իսկ մյուս մասնակիցների ֆինանսական առաջարկներին տրվող միավորները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

ԳՄ= ՆԳ X 100/ԳԳ

- Դիիմ Քոմյունիքեյշնզ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացի գնային առաջարկից, որը գերազանցել է ընթացակարգտի գնման գինը:

Որոշվեց Ռ.Շահազիզյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Դիիմ Քոմյունիքեյշնզ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1 չափաբաժնի մասով գնահատել անբավարար:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով: Հիմք՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին :

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝
Ռ.Շահազիզյան _____

Հանձնաժողովի անդամներ՝
Ա.Աջամօղլյան _____

Դ.Նիկողոսյան _____

Գ.Արաբյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Հակոբյան _____